



# ՇԱԶՆԱՐ ՈՒ ՄԻ ՓԻՇԵՐ

Հեքիաթների ամբողջական  
ժողովածու

Գիրք Դ

Ալա ադ-Դինի և  
հրաշագործ կանթեղի  
պատմությունը



# ՅԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԳԻՇԵՐ

Յեթիաթների ամբողջական ժողովածու  
Գիրք Բ

Ալա ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի  
պատմությունը

Թարգմանիչ Լիլիթ Մկրտչյան  
Երևան, 2026թ.

**NovusLiber**  
Yerevan, 2026

ՅՏԴ 398.21  
ԳՄԴ 82.3(5)-442  
Հ 140

Armenian translation © 2026 Lilit Mkrtchyan

Հայերեն թարգմանություն © 2026 Լիլիթ Մկրտչյան

**Բոլոր իրավունքները պաշտպանված են:**

Սույն գրքի որևէ մաս չի կարող վերարտադրվել, պահվել տեղեկատվական համակարգերում կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով (էլեկտրոնային, մեխանիկական, ձայնագրման, լուսապատճենահանման և այլն) առանց հրատարակչի գրավոր թույլտվության, բացառությամբ տեղեկատվական նպատակներով արվող կարճ մեջբերումների՝ հեղինակի կամ թարգմանչի անվան հստակ նշմամբ:

ISBN 978-9939-9383-7-0 (էլ. հրատ.)

ISBN 978-9939-9383-4-9 (տպագիր)

ISBN 978-9939-9383-4-9



9 789939 938349

# ՀԱՉԱՐ ՈՒ ՄԻ ԳԻՇԵՐ

Հեքիաթների ամբողջական ժողովածու  
Գիրք Բ

## Ալա ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը

«Հազար ու մեկ գիշեր» հեքիաթների ժողովածուն արևելյան բանահյուսական և գրական ժառանգության ամենահայտնի կոթողներից է, որը դարերի ընթացքում ձևավորվել է արաբական, պարսկական և հնդկական պատմողական ավանդույթների համադրմամբ: «Ալա ադ-Դինի և հրաշագործ կանթեղի պատմությունը» ժողովածուի ամենահայտնի և լայնորեն տարածված հեքիաթներից մեկն է, որը միավորում է հրաշապատում, արկածային և սիրային սյուժետային տարրերը:

Պատմությունը պատմում է աղքատ երիտասարդ Ալա ադ-Դինի մասին, որը պատահաբար ձեռք է բերում հրաշագործ կանթեղը և նրա մեջ բնակվող հզոր ջինի օգնությամբ անցնում է աղքատությունից դեպի հարստություն ու իշխանություն: Սակայն հեքիաթի կենտրոնում ոչ միայն կախարդական արկածներն են, այլ նաև մարդկային բնավորության, բախտի, խորամանկության և իշխանության թեմաները, որոնք բնորոշ են «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի բազմաթիվ պատմություններին:

Այս պատմության մեջ միահյուսվում են արևելյան հեքիաթասացությանը բնորոշ հրաշապատում մոտիվները՝ կախարդական առարկաներ, հզոր ջիններ, հեռավոր երկրներ և

անսպասելի ճակատագրական շրջադարձեր: Միևնույն ժամանակ այն արտացոլում է միջնադարյան արևելյան հասարակության պատկերացումները հարստության, իշխանության և մարդկային հնարամտության մասին:

Սույն հրատարակությունը ներկայացնում է «Ալա ադ-Դինի և հրաշագործ կանթեղի պատմությունը» հայերեն թարգմանությամբ՝ իրականացված աղբյուրների համեմատական ուսումնասիրությամբ և պահպանելով պատմողական լեզվի գեղարվեստական հնչողությունը: Թարգմանության ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել արևելյան անունների, մշակութային իրողությունների և պատմական միջավայրի ճշգրիտ փոխանցմանը: Գրքում ներառված են թարգմանչական ծանոթագրություններ, որոնք ընթերցողին կօգնեն առավել ամբողջական ընկալել պատմության մշակութային և պատմական համատեքստը:

Հրատարակությունը նախատեսված է ինչպես դասական հեքիաթների սիրահարների, այնպես էլ արևելյան մշակույթի, բանահյուսության և հեքիաթագիտական ուսումնասիրություններով հետաքրքրվող ընթերցողների համար:

Թարգմանությունը կատարվել է Միխայիլ Սայեի արաբերենից ռուսերեն արված թարգմանությունից:

---

## Խմբագրական նշում

Սույն հրատարակության թարգմանությունը կատարվել է մեծ ուշադրությամբ և խնամքով՝ ձգտելով հնարավորինս հավատարիմ մնալ բնագրի իմաստին, կառուցվածքին և գաղափարական ընթացքին՝ միաժամանակ պահպանելով հայերենի բնական հնչողությունն ու գրական արժանապատվությունը:

Տերմինաբանական և ոճական լուծումները ընտրվել են գիտակցաբար՝ հաշվի առնելով թե՛ բնագրի ներքին տրամաբանությունը, թե՛ հայերեն գրական ավանդույթը:

Թարգմանության նպատակն է եղել ստեղծել այնպիսի տեքստ, որը հայերենում կընթերցվի բնական և ամբողջական՝ առանց արհեստական «թարգմանվածության» զգացողության:

Միևնույն ժամանակ, ցանկացած թարգմանություն անխուսափելիորեն կրում է թարգմանչի լեզվական մտածողության և մեկնողական ընտրությունների հետքը: Այդ պատճառով «Novus Liber» հրատարակչությունը այս աշխատանքը դիտում է որպես հեղինակային թարգմանություն՝ իրականացված լեզվական և մեկնողական ինքնուրույն մոտեցմամբ:

Ընթերցողներին և հետազոտողներին առաջարկվում է այն դիտարկել որպես թարգմանության հնարավոր տարբերակներից մեկը՝ բաց համեմատության, քննարկման և մեկնությունների համար:

Գրական լեզուն կենդանի համակարգ է, և որևէ հրատարակություն չի կարող հավակնել բացարձակ կատարելության:

Եթե ուշադիր ընթերցողները նկատեն տառասխալներ կամ տեխնիկական վրիպումներ, հրատարակչությունը միայն երախտագիտությամբ կընդունի դրանց վերաբերյալ տեղեկությունները՝ [info@novusliber.com](mailto:info@novusliber.com) հասցեով:

## Թարգմանչի նախարան

«Ալա ադ-Դինի» պատմությունը «Հազար ու մի գիշեր» ժողովածուի ամենահայտնի և ամենատարածված պատմություններից է: Դարերի ընթացքում այն բազմիցս վերապատմվել, վերաշարադրվել և հարմարեցվել է տարբեր լեզուներում ու մշակույթներում՝ հաճախ հեռանալով իր նախնական ձևից և ձեռք բերելով նոր գրական կամ ժողովրդական երանգներ:

Այնուամենայնիվ, այս պատմությունը կարդացող ժամանակակից ընթերցողը չի կարող չնկատել, որ դրա լեզուն և պատկերային աշխարհը հաճախ չափազանց պարզունակ են: Պատմության կառուցվածքը կրկնություններով լի է, նկարագրությունները՝ միօրինակ են, իսկ հարստության և իշխանության ցուցադրությունը ներկայացվում է գրեթե գռեհիկ պարզությամբ: Հատկապես աչքի է ընկնում ստրկության մշտական հիշատակումը, որը միջնադարյան արևելյան հասարակությունների համար սովորական սոցիալական իրականություն էր, սակայն այսօր արդեն ընկալվում է բոլորովին այլ բարոյական տեսանկյունից:

Այս հանգամանքները երբեմն կարող են տպավորություն ստեղծել, թե գործը գրական առումով չի համապատասխանում այն չափանիշներին, որոնց սովոր է ժամանակակից ընթերցողը: Սակայն պետք է հիշել, որ «Հազար ու մի գիշեր»-ի պատմությունները ստեղծվել են ոչ թե որպես բարձր գրականություն, այլ որպես բանավոր պատմողական ավանդույթի արդյունք: Դրանք պատմվում էին լսարանին զվարճացնելու, զարմացնելու և կախարդական աշխարհներ

ներկայացնելու նպատակով: Այդ պատճառով դրանց լեզուն հաճախ պահպանել է ժողովրդական պատմողի անմիջականությունը, պարզությունը և երբեմն նաև կոպիտ կամ միամիտ գունավորումները:

Թարգմանության ընթացքում իմ նպատակը եղել է հնարավորինս հավատարիմ մնալ պատմության բնագրային ոճին և պատմողական բնույթին՝ միաժամանակ շարադրելով ընթեռնելի հայերենով: Չնայած անձամբ չեմ կիսում այդ աշխարհի գեղագիտական կամ բարոյական շատ պատկերացումներ՝ հատկապես հարստության ցուցադրական նկարագրությունների և ստրկության անընդհատ հիշատակման նկատմամբ, այդուհանդերձ, այս պատմությունը կարևոր է որպես մշակութային և պատմական փաստաթուղթ: Այն մեզ հնարավորություն է տալիս տեսնել, թե ինչպիսի երևակայական աշխարհ էր պատկերվում միջնադարյան արևելյան ժողովրդական գրականության մեջ և ինչպիսի արժեքներ ու պատկերացումներ էին տարածված այդ ժամանակների պատմողական ավանդույթներում:

Չուսով եմ, որ ընթերցողը «Ալա ադ-Դինի» այս թարգմանությունը կընդունի որպես հանդիպում՝ մի հեռավոր մշակութային աշխարհի հետ, որի հմայքն ու սահմանափակումները միասին ձևավորել են այս պատմության երկարատև կյանքը:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ալա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը, մաս 1.....3

Ալա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը, մաս 2...29

Ալա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը, մաս 3...57

Ալա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը, մաս 4...91

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 115



Երբ ժամը եկավ, Շահարապառը սկսեց  
Ալա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեի  
պատմությունը...

# Այլա Ադ-Դինի ու հրաշագործ կանթեղի պատմությունը, մաս 1

Ասում են, ո՛վ բախտավոր արքա, թե Չինաստանի քաղաքներից մեկում մի աղքատ դերձակ էր ապրում: Եվ այդ մարդը մի որդի ուներ՝ անունը Այլա ադ-Դին: Այս որդին դեռ մանկությունից շեղ ու ապիկարի մեկն էր: Եվ երբ լրացավ նրա տասը տարին, հայրը որոշեց նրան որևէ արհեստ սովորեցնել: Բայց քանի որ ապրում էր մեծ աղքատության մեջ, չէր կարող որդուն կարգել որևէ վարպետի, քանզի վարպետը վարձ կպահանջեր, իսկ նրա գրպանում նույնիսկ հացի փողը հազիվ էր բավարարում: Եվ նա տղային տարավ իր փոքրիկ խանութը, որ սովորեցնի դերձակի արհեստը:

Բայց Այլա ադ-Դինի մտքին միայն ամբողջ օրը փողոցներում թրև գալն էր: Նա մի ժամ էլ չէր կարողանում նստած մնալ հոր խանութում: Եվ միայն սպասում էր, թե երբ էր հայրը ոտքը քաշելու որևէ պատվիրատուի մոտ, որպեսզի ինքն իսկույն ծլկի խանութից ու գնա խաղալու իր նման ուրիշ անգործ ապիկարների հետ:

Այդպիսին էին նրա սովորությունները, և հնարավոր չէր նրան ստիպել հնազանդվել հորը, նստել խանութում և սովորել հոր արհեստը: Հայրը լրիվ ուժասպառ եղավ նրան խրատելով, բայց ոչինչ չկարողացավ անել անհնազանդ գավակի հետ, և մեծ վշտից ու ցավից ծանր հիվանդացավ ու մահացավ: Իսկ Այլա ադ-

Դինը շարունակեց վարել իր անխոհեմ անհիմաստ կյանքը, և երբ նրա մայրը տեսավ, որ ամուսինը վախճանվել է՝ անցնելով Մեծ Արարչի ողորմածության տակ, իսկ որդին շարունակում է թափառել և ո՛չ արհեստ գիտի, ո՛չ էլ որևէ գործ, որով կարելի է հաց վաստակել, նա վաճառեց այն ամենը, ինչ ամուսինը թողել էր խանութում, սկսեց բամբակ մանել և ապրում էր իր ձեռքերի աշխատանքով՝ գիշեր-ցերեկ բամբակե թել մանելով, որ ապրուստ վաստակի իր և իր ապիկար որդու՝ Ալա ադ-Դինի համար:

Իսկ Ալա ադ-Դինը, տեսնելով, որ ազատվել է խիստ հորից, ավելի շատ կապը կտրեց, սկսեց օրնիբուն գվռնել ու անկարգություն անել և տուն էր գալիս միայն ուտելու ժամին, մինչդեռ նրա խեղճ մայրը օրնիբուն բամբակ էր մանում ու աշխատում՝ իրեն չխնայելով, որպեսզի իր անբան որդուն կերակրի: Եվ այսպես նրանք ապրեցին, մինչև Ալա ադ-Դինը դարձավ տասնհինգ տարեկան:

Եվ ահա մի օր, երբ Ալա ադ-Դինը փողոցն էր չափչփում մյուս անբան տղաների հետ, նրանցից ոչ հեռու կանգ առավ մի մարդ՝ օտարական, և սկսեց նայել Ալա ադ-Դինին ու հետևել նրան՝ ուշադրություն չդարձնելով նրա ընկերներից ոչ մեկի վրա: Այդ մարդը Մադրիբից<sup>[1]</sup> էր, և իրականում մի կախարդ-հրաշագործ էր, որն իր կախարդությամբ կարող էր տարբեր հնարքներ անել, գիտեր տարբեր փիլիսոփայական գիտություններ և արվեստներ և լավ տիրապետում էր նաև աստղագուշակության արվեստին: Եվ երբ նա ուշադիր նայեց Ալա ադ-Դինին ու երկար գննեց նրա դեմքը, քայլվածքն ու կերպարանքը, ինքն իրեն ասաց.

«Իրոք, սա հենց այն տղան է, ով պետք է ինձ, և ես հենց նրա համար եմ դուրս եկել իմ երկրից, իսկ հիմա կարծես գտա նրան»:

Նա մի կողմ տարավ տղաներից մեկին և սկսեց հարցուփորձ անել Ալա ադ-Դինի մասին՝ թե նա ում որդին է, ինչ էր նրա հոր անունը, և տեղեկացավ նրա ընտանիքի բոլոր հանգամանքների մասին: Այա մոտեցավ Ալա ադ-Դինին, մի կողմ տարավ նրան ու հարցրեց.

«Տղա՛ս, դու այսինչ դերձակի որդին չե՞ս»:

«Այո՛, պարոն ուխտավոր, – պատասխանեց Ալա ադ-Դինը, – բայց հայրս արդեն վաղուց մահացել է»:

Երբ Մադրիբցին սա լսեց, իսկույն առաջ նետվեց ու գրկեց Ալա ադ-Դինին, սեղմեց նրա կրծքին ու սկսեց ջերմեռանդորեն համբուրել նրան, անգամ արցունք թափեց: Իսկ Ալա ադ-Դինը, տեսնելով նրան այդ վիճակում, շատ զարմացավ ու հարցրեց.

«Ինչո՞ւ եք լաց լինում, և որտեղի՞ց եք ճանաչում իմ հորը»:

Իսկ Մադրիբցին լացակումած ու տխուր ձայնով պատասխանեց.

«Ո՛վ իմ զավակս, ինչպե՞ս կարող ես ինձ նման հարց տալ: Ես լաց եմ լինում, որովհետև դու ասացիր քո հոր մահվան մասին, իսկ նա իմ եղբայրն էր՝ նույն մորից ու հորից: Ես հոգնել եմ երկար ժամանակ ճամփորդելով հեռավոր երկրներում, բայց մտահոգ չէի, քանի դեռ հույս ունեի, որ կտեսնեմ նրան ու աչքերս կփառավորվեն նրա դեմքին նայելով, իսկ դու, եղբորորդի՛ս, ասում ես, թե նա մահացել է: Դրա համար եմ ես լաց լինում, և նաև իմ չար բախտի համար, քանի որ եղբայրս մահացավ, իսկ ես չհասցրի տեսնել նրան: Եվ հենց որ քեզ տեսա, զավա՛կս, Արարչով եմ երդվում, որ չկասկածեցի անգամ, թե դու իմ եղբոր որդին ես: Ես քեզ անմիջապես ճանաչեցի այն տղաների մեջ, որոնց հետ խաղում էիր, իսկ եղբայրս, քո հայրը, երբ մենք բաժանվեցինք, դեռ

ամուսնացած չէր: Եվ Արարչով եմ երդվում, զավա՛կս, ինձ համար ավելի լավ կլիներ նրան տեսնել ու մահանալ նրա փոխարեն, որովհետև ես հույս ունեի երկար թափառումներից հետո ևս մեկ անգամ գրկել նրան, բայց բաժանումն ինձ վրա թանկ նստեց, և այս հարվածն արդեն ամեն ինչից ծանր է: Չես կարող խուսափել նրանից, ինչը լինելու է, և այնքան մեծ է Արարչի իշխանությունն իր արարածների վրա, որ դրանից ազատում չկա: Բայց դու, որդի՛ս, կփոխարինես նրան ինձ համար, քանի որ նրա որդին ես, և ես քեզանով կսփոփվեմ, որովհետև ով քեզ նման ժառանգ է թողել, նա չի մահացել»:

Այնուհետև Մադրիբցին ձեռքը մտցրեց գրպանը, տասը դինար հանեց, մեկնեց Ալա ադ-Դինին ու ասաց.

«Ո՛վ իմ զավակ, որտե՞ղ եք ապրում, և որտե՞ղ է քո մայրը՝ իմ եղբոր կինը»:

Եվ Ալա ադ-Դինը բռնեց Մադրիբցու ձեռքը ու նրան տարավ իրենց տուն: Իսկ Մադրիբցին ասաց նրան.

«Վերցրո՛ւ այս փողը, որդի՛ս, տար տուր մորդ, իմ ողջույնը նույնպես կփոխանցես նրան ու կասես. «Յորս եղբայրը, իմ հարազատ հորեղբայրը, վերադարձել է օտար երկրներից»»: Իսկ ես, եթե Արարիչը կամենա, վաղը կգամ ձեզ մոտ՝ մորդ ողջունելու, կտեսնեմ այն տունը, որտեղ ապրել է իմ եղբայրը, և կայցելեմ նրա գերեզմանը»:

Եվ Մադրիբցին համբուրեց Ալա ադ-Դինին, թողեց նրան ու գնաց իր ճանապարհով, իսկ Ալա ադ-Դինը, ուրախանալով փողի վրա, շտապեց տուն: Նա տուն եկավ անսովոր ժամի, քանի որ սովորաբար գալիս էր միայն ճաշի և ընթրիքի համար, և ուրախությամբ լի ներս վազեց ու գոչեց.

«Մայրի՛կ, քեզ կուրախացնենմ. իմ հորեղբայրը վերադարձել է օտար երկրներից և քեզ շատ ողջույններ է ուղարկում»:

«Դու կարծես ծաղրում ես ինձ, որդի՛ս, – ասաց մայրը. – Ի՞նչ հորեղբոր մասին ես խոսում, քեզ որտե՞ղից հորեղբայր, և ո՞նց պիտի հանկարծ հորեղբայր հայտնվեր քեզ: Դու ոչ մի հորեղբայր էլ չունես»:

Եվ Ալա ադ-Դինը բացականչեց.

«Ինչպե՞ս կարող ես այդպես ասել, մայրի՛կ, որ ես հորեղբայր չունեմ: Ուրեմն, քո ասելով, ես ոչ մի ողջ ազգական չունե՞մ: Իսկ ես հենց նոր տեսա իմ հորեղբորը, և նա ինձ գրկեց ու համբուրեց, ու լաց եղավ: Նա ինձ ճանաչեց և գիտի մեր ամբողջ ընտանիքի մասին, իսկ եթե չես հավատում, նայի՛ր, տե՛ս, թե նա ինչ է տվել ինձ՝ տասը դինար: Նա դրանք ինձ տվեց ու ասաց. «Տար տուր մորդ», և եթե Արարիչը կամենա, վաղը նա ինքը կգա մեր տուն՝ քեզ ողջունելու: Եվ նա պատվիրեց, որ այս խոսքերն էլ քեզ փոխանցեմ»:

«Այո՛, որդի՛ս, – ասաց Ալա ադ-Դինի մայրը, – ես գիտեմ, որ դու մի հորեղբայր ունեիր, բայց նա մահացել է շատ վաղուց, իսկ ուրիշ հորեղբոր ես չեմ ճանաչում»:

Եվ նա ամբողջ գիշեր խորհեց այդ պատահարի մասին:

Իսկ Մադրիբեցի կախարդը, երբ առավոտը բացվեց, վեր կացավ, հագավ իր հագուստները և ուղևորվեց նրանց փողոցը, որպեսզի գտնի Ալա ադ-Դինին, որովհետև նրա հոգին չէր հանդուրժում երկար բաժանված մնալ տղայից: Նա որոնեց նրան այնքան ժամանակ, մինչև գտավ, իսկ Ալա ադ-Դինը, ինչպես միշտ, խաղում էր փողոցում մյուս դեռահաս տղաների հետ:

Մաղրիբցին մոտեցավ Ալա ադ-Դինին, կրկին գրկեց ու համբուրեց նրան, ապա քսակից հանեց երկու դինար և ասաց.

«Վերցրու սրանք, որդի՛ս, տար տուր մորդ և ասա. «Իմ հորեղբայրը ցանկանում է այսօր երեկոյան գալ մեր տուն և մեզ հետ ընթրել. վերցրու այս փողը, մայրի՛կ, ու մի լավ ընթրիք պատրաստի՛ր»: Բայց մինչ կգնաս, ինձ տար ցույց տուր քո տունը, որպեսզի չշփոթվեմ ու երեկոյան կարողանամ հեշտ գտնել այն»:

«Կամքիդ ծառան եմ», – ասաց Ալա ադ-Դինը:

Եվ նա քայլեց Մաղրիբցու առաջից ու տարավ նրան իրենց տուն: Տան տեղը հիշելով՝ Մաղրիբցին թողեց նրան ու գնաց իր գործերով, իսկ Ալա ադ-Դինը ներս վազեց մոր մոտ, փոխանցեց հորեղբոր խոսքերը, հանձնեց երկու դինարն ու ասաց.

«Իմ հորեղբայրը ցանկանում է այսօր երեկոյան մեզ հետ ընթրել»:

Եվ Ալա ադ-Դինի մայրը գնաց շուկա, գնեց այն ամենը, ինչ իրեն անհրաժեշտ էր, վերադարձավ տուն ու սկսեց ընթրիք պատրաստել, իսկ ուտեստների համար սեղանի սպասքը փոխ առավ հարևաններից: Երբ ընթրիքի ժամը մոտեցավ, նա ասաց իր որդուն.

«Որդի՛ս, ընթրիքը պատրաստ է: Գուցե քո հորեղբայրը չգիտի մեր տան տեղը: Գնա՛, դիմավորի՛ր նրան»:

«Կամքիդ ծառան եմ», – պատասխանեց Ալա ադ-Դինը:

Եվ հենց նա դուրս էր գալիս տնից, դարպասին հանկարծ թակոց լավեց: Նա իսկույն բացեց դարպասը, և պարզվեց, որ Մաղրիբցի կախարդն է, իսկ նրա հետ՝ մի ծառա, որը կրում էր նաբիզով<sup>[2]</sup> լի մի սափոր, մրգեր, քաղցրավենիք և այլ նվերներ:

Եվ Ալա ադ-Դինը վերցրեց այդ ամենը ծառայից, իսկ ծառան գնաց իր ճանապարհով:

Ալա ադ-Դինը ներս ուղղորդեց Մադրիբցուն, և երբ նրանք տուն մտան, Մադրիբցին առաջ գնաց ու, լաց լինելով, ողջունեց տղայի մորը և հարցրեց, թե որտեղ էր սովորաբար նստում իր եղբայրը: Կինը ցույց տվեց իր ամուսնու տեղը, և Մադրիբցին մոտեցավ, սկսեց համբուրել գետինը՝ բացականչելով.

«Վա՛յ ինձ, վա՛յ ինձ... Ի՛նչ տխուր է իմ բախտը: Ինչպե՛ս գրկվեցի քեզանից, ո՛վ եղբայրս, ո՛վ աչքիս լույս, աչքիս արցունք, ո՛վ սիրելիս»:

Եվ նա այնքան ժամանակ էր այսպիսի խոսքեր ասում, հեկեկում ու ողբում, հարվածելով իր այտերին, մինչև Ալա ադ-Դինի մայրը վախեցավ, թե նա կարող է իր առողջությանը վնաս հասցնել այդքան մեծ սգո եռանդից: Նա մոտեցավ Մադրիբցուն, բռնեց նրա ձեռքը, բարձրացրեց նրան ու ասաց.

«Ի՛նչ օգուտ կա հիմա ողբալուց, ո՛վ տե՛գրս: Այդպիսով դու միայն ինքդ քեզ ես վնասում»:

Նա Մադրիբցուն նստեցրեց ու սկսեց մխիթարել նրան: Եվ երբ Մադրիբցին փոքր-ինչ հանգստացավ, նա սկսեց խոսել կնոջ հետ և այսպես ասաց նրան.

«Ո՛վ իմ եղբոր կին, մի՛ զարմացիր, որ դու ինձ չես ճանաչում և որ իմ եղբոր կենդանության օրոք երբեք ինձ չես տեսել: Դա այն պատճառով է, որ ես քառասուն տարի առաջ հեռացել եմ մեր քաղաքից ու բաժանվել եղբորիցս: Ես շրջել եմ Զնդկաստանում, Սինդում<sup>[3]</sup> ու Մադրիբի բոլոր քաղաքներում, մտել եմ Կահիրե և բնակվել եմ լուսեղեն Մեդինայում,<sup>[4]</sup> թո՛ղ նրա Տիրոջ վրա լինեն

Արարչի ամենամեծ օրհնությունն ու բարիքը: Այնտեղից ես գնացի անհավատների երկրները և այնտեղ մնացի տասնչորս տարի»:

«Այնուհետև, ո՛վ իմ եղբոր կին, մի օր սկսեցի մտածել իմ եղբոր, իմ քաղաքի ու հայրենի հողի մասին, և իմ մեջ արթնացան կարոտն ու եղբորս տեսնելու ցանկությունը: Ես սկսեցի լաց լինել, ու կարոտն ինձ անդադար դրդում էր գալ այստեղ՝ այս քաղաքը, որպեսզի տեսնեմ եղբորս: Եվ վերջապես ասացի ինքս ինձ. «Ո՛վ մարդ, որքան ժամանակ ես դու օտար երկրներում մնալու՝ քո հայրենիքից հեռու: Դու ունես միայն մեկ եղբայր և այլևս ուրիշ ոչ ոք: Գնա՛, տես՛ նրան: Ո՛վ գիտի, թե ինչ հարվածներ է դեռ պատրաստել բախտը և ինչ շրջադարձներ կբերի ժամանակը: Մեծ վիշտ կլինի, եթե մահանաս ու չհասցնես եղբորդ տեսնել: Դու, փա՛ռք Արարչին, ունես հարստություն ու շատ ունեցվածք: Դու շատ փող ունես, իսկ քո եղբայրը, գուցե, ապրում է սուղ ու սակավ կյանքով: Գնա՛, տես նրան, և եթե տեսնես, որ նա աղքատության մեջ է, օգնի՛ր նրան»:

«Եվ ես այդպես մտածեցի ամբողջ գիշեր, և երբ առավոտը բացվեց, պատրաստվեցի ճանապարհ ընկնելու: Ես գնացի ուրբաթօրյա աղոթքի,<sup>[5]</sup> ապա նստեցի իմ ազնվացեղ ձին ու ճանապարհ ընկա: Շատ դժվարություններ հաղթահարեցի և սարսափելի վտանգների ենթարկվեցի, բայց Արարիչն ինձ բախտավորություն տվեց, և ես հասա ձեր քաղաքը: Եվ երբ շրջում էի փողոցներով, տեսա քո որդի Ալա ադ-Դինին, որը խաղում էր փողոցային տղաների հետ, և երդվում եմ Մեծն Արարչով, ո՛վ իմ եղբոր կին, հենց այն պահին, երբ նրան տեսա, սիրտս բացվեց նրա հանդեպ, քանզի արյունը ձգտում է արյանը, և ես ճանաչեցի նրան իր արտաքինով»:

«Եվ մոռացա այն բոլոր տառապանքներն ու գրկանքները, որոնք կրել էի, և մեծ եղավ իմ ուրախությունը: Բայց Ալա ադ-Դինը պատմեց ինձ, որ իմ եղբայրը մահացել է, և, ավանդ, ո՛վ իմ եղբոր կին, երբ դա լսեցի, խորապես տխրեցի, և գուցե Ալա ադ-Դինը քեզ պատմել է, թե որքան մեծ վիշտ ու ցավ ինձ պատեց: Սակայն ես մխիթարվում եմ Ալա ադ-Դինով և հույս ունեմ, որ Արարչի կամքով նա կփոխարինի ինձ իմ հանգուցյալ եղբորը, իսկ ով իր համար փոխարինող է թողել, նա չի մահացել»:

Այնուհետև Մադրիբցին աչքի տակով նայեց ու տեսավ, որ Ալա ադ-Դինի մայրը այդ խոսքերից սկսել է լաց լինել, և դիմեց Ալա ադ-Դինին, որպեսզի նա հաստատի, թե ինքը նրա ամուսնու իսկական եղբայրն է, ու մխիթարի նրան, և, որպեսզի քողարկի իր խորամանկությունն ու խաբեությունը, ասաց.

«Ո՛վ իմ զավակ, ի՞նչ արհեստներ ես սովորել: Ասա՛ ինձ, ի՞նչ կարող ես անել, որ ապրուստ վաստակես մորդ պահելու համար»:

Ալա ադ-Դինը ամաչեց, շփոթվեց, գլուխը կախեց ու հայացքը հառեց գետնին: Իսկ նրա մայրը ասաց.

«Որտեղի՞ց նրան արհեստ: Ո՛չ մի արհեստ էլ չունի: Ամբողջ օրը թրև է գալիս ու անպետք օրեր է անցկացնում փողոցայինների հետ միասին: Իսկ նրա հայրը՝ խեղճ մարդ, ախ, ինչո՞ւ այդքան վաղ մահացավ... Չենց նրա պատճառով հիվանդացավ, նրա հոգսից մաշվեց ու մահացավ, իսկ ես, վա՛յ ինձ, գիշեր-ցերեկ աշխատում եմ, բամբակ եմ մանուկ, որպեսզի երկու հոգու հաց վաստակեմ, ինչով էլ ապրում ենք: Ահա՛ թե ինչպիսին է նա, տե՛գրս, իսկ ես այլևս ուժ չունեմ այսքան մեծ տղա միայնակ պահելու համար և հազիվ եմ կարողանում մեզ կերակրել: Մեկը լինել, ինձ պահել»:

Այդ ժամանակ Մաղրիբցին դիմեց Ալա ադ-Դինին ու ասաց.

«Ինչո՞ւ ես դու, եղբորս որդի, այսպես անառակ կյանքով ապրում: Ամո՛թ, սա քեզ վայել չէ: Դու արդեն տղամարդ ես դարձել ու խելացի մարդ ես երևում, իսկ դրանից բացի՝ բարի մարդկանց զավակ ես: Ամոթ է, որ քո մայրը՝ կին, այրի, քրտնաջան աշխատում է օրնիբուն քեզ կերակրելու համար, իսկ դու՝ ջահել տղամարդ, անգործ ես: Պետք է արհեստ սովորես, որպեսզի կարողանաս ապրուստ վաստակել քեզ ու մորդ համար: Նայի՛ր, որդի՛ս, ձեր քաղաքում բազմաթիվ վարպետներ կան: Տե՛ս, թե ո՞ր արհեստն է քեզ առավել դուր գալիս, և ես քեզ կտանեմ այդ վարպետի մոտ, որպեսզի նրանից սովորես, և երբ մեծանաս, գոնե մի արհեստ ունենաս, որով կարելի է ապրել: Գուցե քեզ դուր չի՞ գալիս հորդ արհեստը: Ընտրի՛ր այն, ինչն ավելի մոտ է սրտիդ ու հաճելի է քեզ, ասա՛ ինձ, և ես ամեն ինչով կօգնեմ քեզ»:

Բայց Մաղրիբցին տեսավ, որ Ալա ադ-Դինը լռում է ու չի պատասխանում, և հասկացավ, որ տղային դա դուր չի գալիս, և որ նա չի ցանկանում որևէ արհեստ սովորել, քանի որ այդպես է դաստիարակվել ու սովոր է անգործության:

«Ո՛վ եղբորս որդի, – ասաց Մաղրիբցին, – մի՛ տխրիր իմ խոսքերից: Եթե չես ցանկանում արհեստ սովորել, ես քեզ վաճառական կդարձնեմ, քեզ համար վաճառականի խանութ կբացեմ և ինքս կլցնեմ այն ամենաթանկ գործվածքներով: Դու կճանաչես մարդկանց, նրանց հետ առևտուր կանես ու կդառնաս քաղաքում հայտնի վաճառական»:

Երբ Ալա ադ-Դինը լսեց Մաղրիբցու խոսքերը և նրա խոստումը, որ ինքը վաճառական կդառնա, շատ ուրախացավ, որովհետև համոզված էր, որ վաճառականները միշտ մաքուր ու

շքեղ հագուստ են կրում և բոլորը մեծ մարդիկ են: Նա նայեց Մադրիբցուն, ծիծաղեց ու գլխով արեց՝ ցույց տալով, որ համաձայն է, և Մադրիբցին հասկացավ, որ տղան ցանկանում է վաճառական դառնալ:

«Ո՛վ եղբորս որդի, – ասաց նա, – դու միայն տղամարդ եղիր, և ես վաղը առավոտյան քեզ ինձ հետ կտանեմ շուկա, կգնեմ քեզ շքեղ հագուստ, հետո քեզ համար մի խանութ կգտնեմ, որը սազ է սկսնակ վաճառականի համար, կլցնեմ այն թանկ գործվածքներով, և դու այնտեղ կնստես, առքուվաճառք կանես ու եկամուտ կունենաս»:

Երբ Ալա ադ-Դինի մայրը լսեց այս խոսքերը, թեև դեռ կասկածներ ուներ Մադրիբցու մասին, նա իր մեջ հաստատ որոշեց, որ Մադրիբցին իրոք իր ամուսնու եղբայրն է, որովհետև անհնար է, որ օտար մարդն այսքան բան աներ իր որդու համար: Եվ նա սկսեց խրատել ու սովորեցնել տղային, որ գլխից հանի բոլոր հիմարությունները և միշտ լսի հորեղբորը, երբեք չհակաճառի նրան, որովհետև հորեղբայրը նրա համար նույնն է, ինչ հայրը: Ժամանակն է, որ փոխհատուցի այն տարիները, որոնք անցել են անգործության ու անիմաստության մեջ:

Այնուհետև Ալա ադ-Դինի մայրը ընթրիքը մատուցեց, և բոլորը նստեցին սեղանի մոտ ու կերան, մինչև կշտացան, ապա լվացին ձեռքերը և նստեցին՝ զրուցելով առևտրականի գործի, առք ու վաճառքի արհեստի մասին:

Մադրիբցին, տեսնելով, որ գիշերվա կեսն անցել է, վեր կացավ ու գնաց իր կացարանը՝ խոստանալով, որ առավոտյան կգա ու Ալա ադ-Դինին իր հետ շուկա կտանի: Իսկ Ալա ադ-Դինը

ամբողջ գիշեր ուրախությունից չքնեց, ասես թևեր առած թռչում էր երազանքների մեջ:

Երբ առավոտը եկավ, Մաղրիբցին թակեց դարպասը, Ալա ադ-Դինի մայրը վեր կացավ ու բացեց, բայց Մաղրիբցին չցանկացավ ներս մտնել ու պահանջեց, որ Ալա ադ-Դինը դուրս գա, որպեսզի նրան իր հետ տանի: Ալա ադ-Դինը կայծակի արագությամբ հագնվեց ու դուրս եկավ, բարևեց Մաղրիբցուն, համբուրեց նրա ձեռքը, և Մաղրիբցին բռնեց նրա ձեռքն ու տարավ շուկա:

Այնտեղ նա մտավ մեծ վաճառականներից մեկի խանութը և պահանջեց մի ամբողջ ձեռք հագուստ ու փոխնորդ՝ գունագեղ, շքեղ ու թանկ: Վաճառականը բերեց նրա ուզածը՝ կատարյալ, շքեղ հագուստներ ու փոխնորդ՝ արդեն կարված ու պատրաստ:

«Ո՛վ եղբորս որդի, – ասաց Մաղրիբցին, – ընտրիր այն, ինչը քեզ դուր է գալիս»:

Տղան ուրախացավ ու զվարթացավ՝ տեսնելով, որ Մաղրիբցին իրեն թույլ է տալիս ինքնուրույն ընտրել: Նա ընտրեց իր սրտով մի գեղեցիկ հագուստ ու հետն էլ մի ձեռք փոխնորդ, և Մաղրիբցին վճարեց վաճառականին ու դուրս եկավ խանութից: Ապա նրանք գնացին բաղնիք, միասին լողացան ու օծվեցին բուրմունքներով, իսկ ջրից դուրս գալուց հետո քաղցր ըմպելիք խմեցին: Ալա ադ-Դինը հագավ իր նոր հագուստը, և նրա միտքը երկինք թռավ ուրախությունից: Նա մոտեցավ Մաղրիբցուն, համբուրեց նրա ձեռքն ու ասաց.

«Թող Արարիչը քեզ պահի, ո՛վ հորեղբայր»:

Այնուհետև նրանք դուրս եկան բաղնիքից, և Մաղրիբցին նրան տարավ վաճառականների շուկա, շրջեց նրա հետ շուկայում

և ցույց տվեց, թե ինչպես է կատարվում առևտուրը՝ առքն ու վաճառքը:

«Ո՛վ եղբորս որդի, – ասաց նա, – նայիր վաճառականներին՝ ինչպես են նրանք առք ու վաճառք անում, որպեսզի սովորես տարբերել իրերն ու ապրանքները. սա է լինելու քո արհեստը»:

Այնուհետև նա Ալա ադ-Դինի հետ շրջեց քաղաքում, ցույց տվեց նրան քաղաքի մզկիթները, իջևանատներն ու հյուրանոցները, հետո նրանք մտան մի հռչակավոր խոհարարի մոտ, որը նրանց շքեղ ճաշ մատուցեց՝ ամբողջը արծաթե սպասքով: Նրանք կերան, խմեցին ու վայելեցին: Ապա Մադրիբցին Ալա ադ-Դինին ցույց տվեց զբոսանքի ու զվարճանքի վայրերը, խաղատեղիները, ցույց տվեց Սուլթանի պալատը, իսկ հետո նրան տարավ օտարականների իջևանատունը՝ այն սենյակը, որտեղ ինքն էր բնակվում:

Մադրիբցին իր մոտ էր հրավիրել նաև մի քանի ծանոթ վաճառականների, և երբ նրանք եկան, նրանց առաջ սեղան պատվիրեց ու պատմեց, որ այդ տղան իր եղբոր որդին է:

Երբ բոլորը կերան, խմեցին ու կշտացան, Մադրիբցին վեր կացավ, Ալա ադ-Դինի ձեռքից բռնեց ու նրան տուն տարավ:

Նա տղային բերեց մոր մոտ, և երբ մայրը տեսավ նրան այդպիսի հագուստով, տակից էլ շքեղ փոխնորդով, ասես մի արքայազն լիներ, քիչ էր մնում ուրախությունից թռչկոտեր և սկսեց շնորհակալություն հայտնել Մադրիբցուն:

«Ո՛վ իմ տե՛գր, – բացականչեց կինը, – Արարչով եմ երդվում, միտքս խառնվել է, և չգիտեմ՝ ինչ լեզվով քեզ շնորհակալություն հայտնեմ քո բարերարության համար և ինչպես գովեմ այն բարիքը, որ արեցիր իմ որդուն»:

«Ո՛վ եղբորս կին, – պատասխանեց Մադրիբեցին, – ես ոչ մի բարեգործություն չեմ արել: Ալա ադ-Դինը եղբորս որդին է, հետևաբար՝ իմ որդին, և ես պարտավոր եմ փոխարինել նրա հորը: Խաղաղվի՛ր»:

«Խնդրում եմ Արարիչին՝ նրա սրբերի ու մարգարեների անունով, թող քեզ պահի ու երկար կյանք շնորհի, որպեսզի դու լինես այս տղայի հովանավորը, – բացականչեց Ալա ադ-Դինի մայրը: – Իսկ նա միշտ կինազանդվի քեզ և երբեք չի հակառակվի»:

«Ո՛վ եղբորս կին, – ասաց Մադրիբեցին, – այդ մասին մի՛ մտահոգվիր: Ալա ադ-Դինը խելացի տղա է, և ես հույս ունեմ, որ մեծ Արարչի կամքով նա կլրացնի իր հոր տեղը, և աչքերդ կուրախանան նրան նայելով: Արարչի կամքով նա այս քաղաքում կդառնա ամենամեծ վաճառականներից մեկը: Վաղը ուրբաթ է, և ես չեմ կարող նրա համար խանութ բացել, որովհետև աղոթքից հետո բոլոր վաճառականները կգնան այգիներ ու զբոսանքի: Բայց շաբաթ օրը, եթե կամենա Արարիչը, ես կանեմ այնպես, ինչպես ցանկանում է Ալա ադ-Դինը, և նրա համար խանութ կբացեմ: Իսկ վաղը կգամ ձեզ մոտ, նրան ինձ հետ կվերցնեմ և ցույց կտամ քաղաքից դուրս գտնվող այգիներն ու զբոսավայրերը. գուցե նա դրանք դեռ չի տեսել: Վաղը այնտեղ կլինեն բոլոր վաճառականները, և ես ուզում եմ, որ նա ծանոթանա նրանց հետ, իսկ նրանք՝ իրեն տեսնեն ու համարեն իրենցից մեկը»:

Այնուհետև Մադրիբեցին հրաժեշտ տվեց ու գնաց իր կացարանը: Իսկ առավոտյան եկավ ու թակեց դարպասը: Ալա ադ-Դինը ամբողջ գիշեր ուրախությունից չէր քնել, և հենց ճնճուկները ծվլացին ու օրը բացվեց, նա վեր էր կացել, հագել էր